# ՄԻՋՆԱԴԱՐԱԳԻՏԱԿԱՆ 10-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

*Մատենադարանի «Միջնադարագիտական 10-րդ միջազգային գիտաժողով»-ն անցած տարիների գիտական այս միջոցառման հաջող ընթացքի գրավականն է: Այն սկիզբ է առել 2014 թ. և տասը տարի կազմակերպվել որպես «Մատենադարանի երիտասարդական գիտաժողով», և եթե նախորդող տարիներին գործադրվել են բոլոր ջանքերը, որպեսզի գիտաժողովն իր հաստատուն և ուրույն տեղը զբաղեցնի մատենադարանյան և առհասարակ հայաստանյան գիտական միջոցառումների օրացույցում, ապա այսօր, հանձնելով ժամանակի քննությունը, դիմակայելով մերօրյա գիտական մարտահրավերներին և մրցակցությանը, գիտաժողովը ձևավորում է իր նոր տեսլականը՝ լինել միջնադարագիտական տարասեռ ուսումնասիրությունների հանգուցային կարևոր հարթակ, որի նախագրյալներն ամբողջությամբ առկա են:*

*Իր տասնամյա գոյության ընթացքում գիտաժողովն ունեցել է ավելի քան 350 մասնակից հայաստանյան և արտասահմանյան գիտակրթական տարբեր հաստատություններից: Մասնակիցների աշխարհագրությունը նույնպես հիշատակելի է՝ Հայաստան, Իտալիա, Հունաստան, Ֆրանսիա, Շվեյցարիա, Ռուսաստան, Իսրայել, Ավստրիա, ԱՄՆ, Թուրքիա, Իրան և այլն: Հոբելյանական 10-րդ միջազգային գիտաժողովը նույնպես նշանավորվեց տեղացի և արտասահմանցի հետազոտողների առատությամբ, որը փաստվում է նաև Մատենադարանի «Բանբեր»-ի ներկա հատորով: «Բանբեր»-ի այս համարում տեղ է գտել տասնհինգ հոդված, որոնք, գիտաժողովի բովանդակությանը համահունչ, արտացոլում են միջնադարագիտության տարբեր բնագավառներ՝ բանասիրություն, պատմություն, արվեստի և ճարտարապետության պատմություն և այլն:*

*Լիահույս ենք, որ առաջիկա տարիներին միջազգային այս գիտաժողովը կգրանցի նոր հաջողություններ, կընդարձակի մասնակիցների աշխարհագրությունը և կունենա զարգացման նոր հեռանկարներ:*

Խաչիկ Հարությունյան
Գիտաժողովի կազմկոմիտեի ղեկավար